**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ**
**ԱԼԱՎԵՐԴԻ համայնքի ավագանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Ալավերդի** | Ավագանու հերթական նիստ | 17.12.2024թ. | 15:00 | Ալավերդու համայնքապետարան, նիստերի դահլիճ (ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1) |

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԹԻՎ 14 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի հերթական թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

3. Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 12 նոյեմբերի 2024 թվականի N 138-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

4. Ալավերդի համայնքի Օձուն գյուղում գտնվող թիվ 2 մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.203 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

5. Ալավերդի համայնքի Մեծ Այրում գյուղ, 3-րդ փողոց, 1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.55121 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

6. Ալավերդի համայնքի Ախթալա քաղաք, Թումանյան փողոց, 7 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 1.2454 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

7. Ալավերդի համայնքի Ախթալա քաղաք, Աբովյան փողոց, 2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.25307 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամասեր օտարելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

9. Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-022-0101-0160 կադաստրային ծածկագրով 0.65 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

11. N 0078027 վկայականով գրանցված հողամասի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելուն համաձայնություն տալու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

12. Լևոն Գրիգորի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող, N 088580 վկայականով գրանցված ավտոտնակի զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

13. Ալավերդի համայնքի Շնող գյուղ, 1-ին փողոց, 30/1 տարածքում գտնվող, 06-088-0982-0003 ծածկագրով հողամասը կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

14. Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին:

(զեկուցող՝ Դ. Ղումաշյան)

*Նախագիծ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի հերթական թիվ 14 նիստի հետևյալ օրակարգը՝
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի հերթական թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.
   1.3 Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 12 նոյեմբերի 2024 թվականի N 138-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   1.4 Ալավերդի համայնքի Օձուն գյուղում գտնվող թիվ 2 մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.203 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
   1.5 Ալավերդի համայնքի Մեծ Այրում գյուղ, 3-րդ փողոց, 1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.55121 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
   1.6 Ալավերդի համայնքի Ախթալա քաղաք, Թումանյան փողոց, 7 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 1.2454 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին
   1.7 Ալավերդի համայնքի Ախթալա քաղաք, Աբովյան փողոց, 2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքը և զբաղեցրած՝ 0.25307 հա մակերեսով հողամասն անհատույց օգտագործման տրամադրելու մասին.
   1.8 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մի քանի հողամասեր օտարելու մասին.

1.9 Օրինական ճանաչված կառույցները և համապատասխան հողամասերը՝ տվյալ կառույցներն իրականացրած անձանց գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.10 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող 06-022-0101-0160 կադաստրային ծածկագրով 0.65 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

1.11 N 0078027 վկայականով գրանցված հողամասի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելուն համաձայնություն տալու մասին.

1.12 Լևոն Գրիգորի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող, N 088580 վկայականով գրանցված ավտոտնակի զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

1.13 Ալավերդի համայնքի Շնող գյուղ, 1-ին փողոց, 30/1 տարածքում գտնվող, 06-088-0982-0003 ծածկագրով հողամասը կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

1.14 Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ,10, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածների՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի տարածքում 2025 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են դրույքաչափեր՝ ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի գոտիականության:
3. Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:
4. Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի ավագանու՝
___ Դեկտեմբերի 2024 թվականի թիվ ______ որոշման

# ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ

Ալավերդի համայնքում ավագանու կողմից 2025 թ.-ի սահմանելու համար նախատես-վող տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Հավելված

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2025 թ.-ի համար առաջարկվող դրույքաչափը (դրամ) և կիրառվող գործակիցները |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարա-պետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքե-րի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպա-հանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ | |
| | **ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝** | |
| | ա. Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բը-նակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչեվ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտա-դրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | **15 000 դրամ** |
| | բ. Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկ-ված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինություն-ների) համար՝ | |
| | բա) 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շի-նությունների համար՝ | **30 000 դրամ** |
| | բբ) 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շի-նությունների համար՝ | **100 000 դրամ** |
| | բգ) 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | **200 000 դրամ** |
| | բդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | **1 000 000 դրամ** |
| | **ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝** | |
| | գ. Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկ-ված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝ | |
| | գա) 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շի-նությունների համար՝ | **30 000 դրամ** |
| | գբ) 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շի-նությունների համար՝ | **50 000 դրամ** |
| | գգ) 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | **50 000 դրամ** |

| | | |
|---|---|---|
| | գդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100 000 դրամ |
| | **ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝** | |
| | դա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5 000 դրամ |
| | դբ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 10 000 դրամ |
| | Սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները. | |

| Գոտի | Գոտիականության գործակից |
|---|---|
| 13-16 | 2.0 |
| 17-20 | 1.0՝ |

| | | |
|---|---|---|
| 1.1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ կառուցվող անհատական բնակելի տների, ինչպես նաև Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար (եթե սույն հոդվածի 4.1-ին մասով այլ բան սահմանված չէ)՝ | |
| | բ. այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝<br>- 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,<br>- 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,<br>- 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամի և շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,<br>- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը. | |
| 2 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| | ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3 000 դրամ |
| | բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեվանքով օբյեկ- | |

| | | |
|---|---|---|
| | տի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,<br>գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարաության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահանել՝ | 5 000 դրամ |
| 4. | Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող **լցավորման յուրաքանչյուր կայանում օրացուցային տարվա համար սահմանել՝** | |
| 4.1 | Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ | 200 000 դրամ |
| 4.2 | Սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ | 200 000 դրամ |
| 4.3 | Հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ | 200 000 դրամ |
| 5 | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող **լցավորման յուրաքանչյուր կայանում օրացուցային տարվա համար՝** | |
| 5.1 | Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ | 100 000 դրամ |
| 5.2 | Բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ | 100 000 դրամ |
| 5.3 | Հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ | 100 000 դրամ |
| 6. | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար սահմանել՝** | 60 000 դրամ |
| 7. | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար սահմանել՝** | 20 000 դրամ |
| 8. | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղ-ներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար սահմանել՝** | 50 000 դրամ |

| | |
|---|---|
| 9. | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել՝ |

**ա) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

| | |
|---|---|
| - Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10 000 դրամ |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13 000 դրամ |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 17 000 դրամ |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25 000 դրամ |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մա-կերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 35 000 դրամ |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 80 000 դրամ |

**բ) Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

| | |
|---|---|
| - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10 000 դրամ |
| - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13 000 դրամ |
| - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 17 000 դրամ |
| - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25 000 դրամ |
| - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 35 000 դրամ |
| - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 80 000 դրամ |

**9-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները**

| Գոտի | Բնակավայրի անվանումը | Գործակից |
|---|---|---|
| 13-14 | ք. Ալավերդի | 1,0 |
| 15 | ք. Ալավերդի | 0,75 |
| 16 | ք. Ալավերդի, ք. Ախթալա | 0,75 |
| 16 | գ. Օձուն, գ. Արքրի | 0,75 |
| 17 | ք. Ալավերդի, ք. Շամլուղ, | 0,5 |
| 17 | գ.Հաղպատ, գ.Շնող, գ.Թեղուտ, գ.Այգեհատ, գ.Ճոճկան, գ.Արևածագ, գ.Մղարթ, գ.Ծաթեր | 0,5 |
| 18 | գ.Կաճաճկուտ, գ.Ծաղկաշատ, գ.Մեծ Այրում, գ.Նեղոց, գ.Հագվի, գ.Արդվի, գ.Կարմիր Աղեկ | 0,3 |
| 19 | գ. Ջիլիզա | 0,3 |
| 20 | գ. Քարկոփ | 0,3 |

| | | |
|---|---|---|
| **10.** | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ **բացօթյա առևտրի**[1] կազմակերպման թույլտվության համար՝ **յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար** սահմանել՝ | 350 դրամ |
| **11.** | **Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝** | |
| | ա) **Առևտրի օբյեկտների**[2] համար՝ | **30 000 դրամ** |
| | բ) **Հանրային սննդի**[3] և զվարճանքի օբյեկտների համար՝ | **50 000 դրամ** |
| | գ) Բաղնիքների (սաունաների) համար՝ | **200 000 դրամ** |
| | դ) Խաղատների համար՝ | **500 000 դրամ** |
| | ե) Շահումով խաղերի համար՝ | **300 000 դրամ** |
| | զ) Վիճակախաղերի համար՝ | **150 000 դրամ** |

**11-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները**

| Գոտի | Բնակավայրի անվանումը | Գործակից |
|---|---|---|
| 13-14 | ք. Ալավերդի | 1,0 |
| 15 | ք. Ալավերդի | 0,75 |
| 16 | ք. Ալավերդի, ք. Ախթալա | 0,75 |
| 16 | գ. Օձուն, գ. Աքորի | 0,75 |
| 17 | ք. Ալավերդի, ք. Շամլուղ, | 0,5 |
| 17 | գ.Հաղպատ, գ.Շնող, գ.Թեղուտ, գ.Այգեհատ, գ.Ճոճկան, գ.Արեվածագ, գ.Մղարթ, գ.Ծաթեր | 0,5 |
| 18 | գ.Կաճաճկուտ, գ.Ծաղկաշատ, գ.Մեծ Այրում, գ.Նեղոց, գ.Հագվի, գ.Արդվի, գ.Կարմիր Աղեկ | 0,3 |
| 19 | գ. Ջիլիզա | 0,3 |
| 20 | գ. Քարկոփ | 0,3 |

| | | |
|---|---|---|
| **12.** | **Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝** | |
| | **ա) Հիմնական շինությունների ներսում՝** | |
| | - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 5 000 դրամ |
| | - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սնըն-դի օբյեկտի համար՝ | 10 000 դրամ |
| | - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 դրամ |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 20 000 դրամ |

[1] **Բացօթյա առևտուր՝** առևտրի օբյեկտներից, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերից և առևտրի իրականացման վայրերից դուրս՝ օրենսդրությամբ թույլատրված ապրանքների առևտուր.
Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը:

[2] **Առևտրի օբյեկտների տեսակներն են՝** խանութները, կրպակները, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հե-ղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերը:

[3] **Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝** ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:

| | | |
|---|---|---|
| | - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 30 000 դրամ |
| | - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 50 000 դրամ |
| | **բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝** | |
| | - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունե-ցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1 000 դրամ |
| | - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 2 000 դրամ |
| | - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակե-րես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 4 000 դրամ |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակե-րես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 8 000 դրամ |
| | - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակե-րես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 15 000 դրամ |
| | - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 25 000 դրամ |

**12-րդ կետի համար՝ ըստ բնակավայրերի գոտիականության, կիրառվում են ստորև բերված գործակիցները**

| Գոտի | Բնակավայրի անվանումը | Գործակից |
|---|---|---|
| 13-14 | ք. Ալավերդի | 1,0 |
| 15 | ք. Ալավերդի | 0,75 |
| 16 | ք. Ալավերդի, ք. Ախթալա | 0,75 |
| 16 | գ. Օձուն, գ. Աքորի | 0,75 |
| 17 | ք. Ալավերդի, ք. Շամլուղ, | 0,5 |
| 17 | գ.Հաղպատ, գ.Շնող, գ.Թեղուտ, գ.Այգեհատ, գ.Ճոճկան, գ.Արեվածագ, գ.Մղարթ, գ.Ծաթեր | 0,5 |
| 18 | գ.Կաճաճկուտ, գ.Ծաղկաշատ, գ.Մեծ Այրում, գ.Նեղոց, գ.Հագվի, գ.Արդվի, գ.Կարմիր Աղեկ | 0,3 |
| 19 | գ. Ջիլիզա | 0,3 |
| 20 | գ. Քարկոփ | 0,3 |

| | | |
|---|---|---|
| **13.** | Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կեն-դանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 5 000 դրամ |
| **14.** | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տա-րածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահ-մաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, **<u>յուրաքան-չյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝</u>** | |
| | ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս ար-տադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2 000 դրամ |
| | բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տո-կոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 3 500 դրամ |
| | գ. սոցիալական գովազդի համար՝ | 0 դրամ |
| | դ. այլ արտաքին գովազդի համար՝ | 1 500 դրամ |
| | ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տա-րածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի | 25 %-ի չափով |
| | զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտա-քին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի | 10 %-ի չափով |

| | | |
|---|---|---|
| 15. | Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ **օրացուցային տարվա համար՝** | **100 000 դրամ** |
| 16. | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ **օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար** սահմանել՝ | 10 000 դրամ |
| 17. | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ **օրացուցային տարվա համար՝** | 500 000 դրամ |
| 18. | **Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝** | |
| | ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 2 500 000 դրամ |
| | բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 5 000 000 դրամ |
| | գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 7 000 000 դրամ |
| | դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ | 10 000 000 դրամ |
| 19. | **Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝** | |
| | ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ | 20 000 դրամ |
| | բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում | 150 000 դրամ |
| 20. | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ <u>**շրջիկ առևտրի**</u>[4] կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ **յուրաքանչյուր ամսվա համար՝** | 25 000 դրամ |
| 21. | Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային <u>**(մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ)**</u> սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության <u>**մեկ քառակուսի մետրի համար**</u> սահմանել՝ | 10 000 դրամ |

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

**Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.**

| | | |
|---|---|---|
| 1 | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ | 15 000 դրամ |
| 2 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող. բոլոր շինարարական աշխա- | 15 000 դրամ |

[4] **շրջիկ առևտուր**՝ առևտրի օբյեկտներից դուրս՝ շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառք

| | | |
|---|---|---|
| | տանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումըն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ | |
| 3 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել. | 15 000 դրամ |
| 4 | Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել. | 5 000 դրամ |
| 5 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել. | 15 000 դրամ |
| 6 | ՀՀ Կադաստրի կոմիտեի պետական գրանցման ավտոմատացված համակարգին միանալու միջոցով այլ անձանց ծառայություններ մատուցելու համար սահմանել ծառայու-թյան վճար, յուրաքանչյուր ծառայության համար՝ | 1 500 դրամ |
| 7 | Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել. | 3 000 դրամ |
| 8 | **Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում** (*Գլուխ 3, Հոդված 14*). | |
| 8.1 | **Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝** | |
| | 1) Ալավերդի քաղաքում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող **<u>յուրաքանչյուր բնակչի համար՝</u>** | 150 դրամ |
| | 2) Ալավերդի համայնքի /բացառությամբ Ալավերդի քաղաքի/ բնակավայրերում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող **<u>յուրաքանչյուր բնակչի համար՝</u>** | 100 դրամ |
| | 3) Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի **<u>1 քմ մակերեսի համար՝</u>** | 10 դրամ |
| 8.2 | **Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.** | |
| | 1) Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ **<u>մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</u>** | 50 դրամ |
| | 2) Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **<u>մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</u>** | 20 դրամ |
| | 3) Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **<u>մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</u>** | 15 դրամ |
| | 4) Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրո-նական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ **<u>մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝</u>** | 5 դրամ |

| | | |
|---|---|---|
| | 5) Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝** | 10 դրամ |
| | 6) Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված առավել բարձր դրույքաչափով. | 50 դրամ |
| | 7) Շինություններում (այդ թվում՝ առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով: | 50 դրամ |
| 8.2.1 | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝** | 50 դրամ |
| 8.2.2 | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին: | |
| 8.3 | Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ 8 բաժնի 2-րդ մասի 1-5-րդ կետերով և 2.1-ին մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| | 1) ըստ ծավալի՝ **մեկ խորանարդ մետր աղբի համար՝** | 3 000 դրամ |
| | 2) ըստ զանգվածի՝ **մեկ տոննա աղբի համար՝** | 10 000 դրամ |
| 8.3.1 | 8.3-րդ մասով սահմանված ոչ բնակելի շենքի և (կամ) շինության և (կամ) տարածքների մասով աղբահանության հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով: Ընդ որում, նշված շենքի, շինության և տարածքի սեփականատերը 8 բաժնի 2-րդ մասի 1-5-րդ կե-տերով և 2.1-ին մասով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության վերաբերյալ գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին | |
| 8.3.2 | 8.3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքում ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության և (կամ) տարածքի սեփականատերն է կազմակերպում ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման և հաշվարկման ապահովումը՝ 8 բաժնի 3-րդ մասով նախատեսված անձանց կողմից դրա ապահովման անհնարինության դեպքում: Ընդ որում, ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման դեպքում պետք է ապահովվեն աղբի հավաքման ու հեռացման՝ համայնքի ավագանու հաստատած կարգն ու պայմանները: | |
| 8.3.3 | 8.3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կարգավորումները չեն կիրառվում սույն հոդվածի 8.3.2-րդ մասով սահմանվող ըստ զանգվածի կամ ծավալի աղբի հավաքման համար համապատասխան աղբամանների տեղադրման, ինչպես նաև աղբատար մեքենաների անարգել մուտքի ու ելքի անհնարինության դեպքերում: | |

| | | |
|---|---|---|
| | Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, ջրի վճար սահմանել <u>**1 (մեկ) խորանարդ մետրի**</u> համար | **171 դրամ** |
| **9** | -Շամլուղ բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել,<br>ա) առանց կոյուղու սպասարկման, <u>**1 (մեկ) խորանարդ մետրի**</u> համար | **120 դրամ** |
| | | **320 դրամ** |
| | գ) կոյուղու սպասարկումով, <u>**1 (մեկ) խորանարդ մետրի**</u> համար | **170 դրամ** |
| | դ) կոյուղու սպասարկումով, <u>**1 (մեկ) անձի**</u> համար | **380 դրամ** |
| | **Շնող** բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել՝ յուրա-քանչյուր տնտեսության համար ամսական | **500 դրամ** |
| | Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի ոռոգման ջրի վճար սահմանել. | |
| **10** | 0 - 500 մ² մակերես ունեցող հողամասի համար | **300 դրամ** |
| | 501 - 1000 մ² մակերես ունեցող հողամասի համար | **500 դրամ** |
| | 1001 - 2000 մ² մակերես ունեցող հողամասի համար | **1000 դրամ** |
| | 2001 - 3000 մ² մակերես ունեցող հողամասի համար | **1 500 դրամ** |
| | 3001 - 5000 մ² մակերես ունեցող հողամասի համար | **2 000 դրամ** |
| | 5001 - 10000 մ² մակերես ունեցող հողամասի համար | **5 000 դրամ** |
| | 10000 և ավելի մ² մակերես ունեցող հողամասի համար | **10 000 դրամ** |
| **11** | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. | |
| **12** | Ալավերդի համայնքի վարչական տարածքում համայնքային ենթակայության մանկապարտեզներում Ծնողական վճար մեկ ամսվա համար սահմանել՝ | **3 500 դրամ** |
| | Մեկ ծնողի երկրորդ երեխայի հաճախելու դեպքում երկրորդ երեխայի համար մեկ ամսվա վճար սահմանել | 2 000 դրամ |
| | Մեկ ծնողի երրորդ երեխայի հաճախելու դեպքում երրորդ երեխայի համար մեկ ամսվա վճար սահմանել | 0 դրամ |
| | **Հերթապահ խումբ հաճախող մեկ երեխայի ծնողական վճար մեկ ամսվա սահմանել՝** | 1500 դրամ |
| | **Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար ծնողական վճար մեկ ամսվա համար սահմանել՝** | 2 000 դրամ |
| | Միակողմանի ծնողազուրկ երեխաների, մեկ ծնողի երկրորդ երեխայի հաճախելու դեպքում մեկ ամսվա համար վճար սահմանել՝ | 1 000 դրամ |
4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ախթալա քաղաք, 8 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 25.11.2024թ. N 1758-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 81.7 քմ արտաքին մակերեսով բնակելի տանը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.01493 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-003-0023-0011/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Վրույր Վաչագանի Հախինյանին:

5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:1000




1. Արարատ Ռաֆիկի Միրզոյեանի կողմից համայնք Ալավերդի, Օձուն գյուղ, 8-րդ փողոց, 9/20 հասցեում կառուցված բնակելի տան և զբաղեցրած հողամասի տեղադիրքը /ծածկագիր՝ 06-112-0036-0006/

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:1000




2. Մարտիրոս Սուրենի Մարտիրոսյանի կողմից համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 15/4 հասցեում կառուցված ավտոտնակի և զբաղեցրած հողամասի տեղադիրքը /ծածկագիր՝ 06-002-0150-0174/

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:1000




3. Կամո Ժորայի Հակոբյանի կողմից համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գայի փողոց, 6/10 հասցեում կառուցված ավտոտնակի և զբաղեցրած հողամասի տեղադիրքը /ծածկագիր՝ 06-002-0150-0224/

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:1500




4.Վրույր Վաչագանի Հախինյանի կողմից համայնք Ալավերդի, Ախթալա քաղաք, 8 հասցեում կառուցված բնակելի տան և զբաղեցրած հողամասի տեղադիրքը /ծածկագիր՝ 06-003-0023-0011/

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-022-0101-0160 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.65 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, 77-րդ և 80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածներով, 56-րդ հոդվածի առաջին, հինգերորդ և ութերորդ մասերով, 57-րդ հոդվածի առաջին, երկրորդ և յոթերորդ մասերով, 76-րդ, 77-րդ, 78-րդ, հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը, N 25112024-06-0032 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Աքորի գյուղի կադաստրային քարտեզի 06-022-0101-0160 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի, 0.65 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 10 (տասը) տարի ժամկետով տրամադրել ժամանակավոր օգտագործման մրցութային կարգով:
   Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 20000 (քսան հազար) դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի վարձակալությամբ իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
2) Հողամասը վարձակալությամբ իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝
   1) Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթի կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մրցութային հանձնաժողով և գլխավորել այն, ինչպես նաև սահմանել մրցույթի պայմանները (հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի չափը և վարձակալության ժամկետը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը, օգտագործման նպատակը, հաղորդակցուղիների առկայությունը, հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը, հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները, կարող է սահմանել նաև լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ):
   2) Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով սահմանել մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:
   3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ԱԼԱՎԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-022-0101-0160 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.65 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1500



**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### N 0078027 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 94-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ կետով, 623-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 16.09.2002թ. N 10 պայմանագրի 18.2 կետով և հիմք ընդունելով հողամասի վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին Սամվել Խուդինյանի կողմից 19/11/2024թ. տրված դիմումը, վարձակալության իրավունքի N 0078027 վկայականը,համայնքիղեկավարիառաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն լուծելու Սամվել Խուդինյանին վարձակալության իրավունքով պատկանող, N 0078027 վկայականով գրանցված՝ համայնք Ալավերդի, Ճոճկան գյուղում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1.5 հա մակերեսով վարելահողի նկատմամբ վարձակալության իրավունքի պայմանագիրը:
2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Սամվել Խուդինյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ Լոռու մարզի

Վանաձորի համայնքի

ղեկավար

պարոն Դ. Ղուկասյանին

[illegible] գյուղ 6փ. 43 գ.

բնակիչ Սամվել Բաղդասարյանից

# Դիմում

Խնդրում եմ ՁԵՎ 0078027 վկայականի համարով (պայմանագրի) վարձակալած հողատարածքը ( 15000 մ²), որը 10.10.2002թ-ից գտնվում է իմ օգտագործման տակ, դադարեցնել պայմանագիրը և հանձնել համայնքի սեփականությանը: Հարկային պարտք չունեմ, Նախորդ տարիների պարտքը վճարել եմ:

Դիմող [signature] Ս. Բաղդասարյան

19.11.2024թ.

26046457 0280 0209

1

Հավելված

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 10

## ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

«16» 09 2002թ.

[illegible] (այսուհետև վարձատու), մի կողմից, և

(անունը, ազգանունը)

[illegible]

(վարձակալի անունը, ազգանունը, անվանումը)

(այսուհետև վարձակալ), մյուս կողմից, 2002թ. [illegible] 24-ի N 10

աճուրդի և մրցույթի արդյունքների մասին N 1 արձանագրության հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրով համապատասխան վարձատուն մրցույթում հաղթող ճանաչված անձին՝ վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում [illegible] վայրում գտնվող 30000 քառ.մ մակերեսով հողամաս համաձայն սույն պայմանագրի հավելվածը կազմող հողամասի հատակագծի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2. Հողամասը տրամադրվում է [illegible]

(հողամասի տրամադրման նպատակը)

[illegible]

(հողամասի օգտագործման նպատակը, պայմանները և այլն)

(հողամասի օգտագործման նկատմամբ սահմանափակումները)

3. Հողամասի նկարագիրը [illegible]

26046457-0270-0209

Կողմերի իրավունքները և պարտականությունները

4. Վարձակալն իրավունք ունի.

4.1. ստուգելու և օգտագործելու վարձակալած հողամասը ըստ նպատակային նշանակության և հողի նպատակային նշանակությանը համապատասխան;

4.2. վարձակալված հողամասը հետադարձելու բարելավումների և վնասվածքների (այդ թվում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու խախտումների վերացումները) դրա նպատակային օգտագործմանը համապատասխան:

4.3. միայն Վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով վարձակալված հողամասը ենթավարձակալության հանձնելու երրորդ անձի,

4.4. հողամասի վարձակալության ժամկետի ավարտից կամ պայմանագրի վաղաժամկետ լուծումից հետո երբ սույն բնագրում միջոցներ ձեռնարկելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան վարձակալված գույքը ժամանակին Վարձատուին վերադարձնելու համար, եթե Վարձատուի գրավոր համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները, իսկ անբաժանելի անշարժ գույքը կողմերի միջև որոշվող պայմաններով ստանալու Վարձատուին,

4.5. Վարձատուից պահանջելու պատճառված վնասների հատուցում պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում,

4.6. Վարձատուի համաձայնությամբ, նախապատվության իրավունքով [illegible] սույն պայմանագիրը դրա ժամկետի ավարտից հետո:

5. Վարձակալը պարտավոր է.

5.1. ժամանակին և սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը,

5.2. ժամանակին և սահմանված կարգով տարեկան հողատեսքերի մաքուր պահպանել և սույն պայմանագրով նախատեսված հողամասի օգտագործմանը ներկայացվող պահանջները և պահպանման միջոցառումները,

5.3. թույլ չտալ վարձակալված հողամասի որակական վատթարացում, այդ թվում՝ հողի աղտոտում, աղակալում, կամ բնապահպանական վատթարացում,

5.4. Վարձատուի համաձայնությամբ փոփոխությունների ենթարկել վարձակալած հողամասը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն պայմանագրին համապատասխան,

5.5. միայն պայմանագրով նախատեսված վարձակալության ժամկետի լրանալը կամ պայմանագրի վաղաժամկետ լուծման միջոցներ ձեռնարկել Վարձատուի գրավոր համաձայնությամբ իր կողմից հողի վրա կատարված բաժանելի բարելավումները հանելու և անբաժանելի անշարժ գույքը Վարձատուին տալու, անբաժանելի բարելավումները և անշարժ գույքը Վարձատուի գրավոր համաձայնության իր կողմից հողի վրա կատարված

26046457-0260-0209

3

բարելավումները ու անշարժ գույքը (բաժանելի և անբաժանելի) Վարձատուի պահանջով քանդելու կամ վերացնելու միջոցով հողամասը նախնական վիճակի բերելու համար:

5.6. Վարձակալված հողամասի վրա գտնվող և Վարձակալին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը երրորդ անձի մոտ գրավ դնելու կամ օտարելու դեպքում նախապես գրավոր տեղյակ պահել Վարձատուին:

5.7. արգելվում է ինքնակամ կերպով վարձակալության իր իրավունքը գրավ կամ ժառանգորդներին երրորդ անձին փոխանցելը կամ զիջելը, հողը կամ դրա նկատմամբ գույքային իրավունքները գրավ դնելը, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալ ներդնելը, կամ հողամասը երրորդ անձի օգտագործման իրավունքով (հատուցմամբ կամ անհատույց) տրամադրելը.

6. Վարձատուն իրավունք ունի.

6.1. Վարձակալից պահանջելու հողն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով և պայմաններին համապատասխան, պահպանելու հողի օգտագործման նկատմամբ սահմանափակումները, իրականացնելու հողի բարելավման միջոցառումներ:

6.2. Վարձակալի կամ նրա ներկայացուցչի հետ միասին մուտք գործելու վարձակալված հողամաս օգտագործման պայմանները ստուգելու նպատակով, չխոչընդոտելով Վարձակալի բնականոն գործունեությանը,

6.3. վարձակալված հողամասն օտարելու հօգուտ երրորդ անձի, եթե այդ օտարումը չի խախտում Վարձակալի նախապատվության հողի ձեռք բերման իրավունքը և չի անդրադառնում վարձակալության պայմանագրի վրա,

6.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված դեպքում և կարգով վաղաժամկետ լուծելու պայմանագիրը,

6.5. օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից,

6.6. հողամասի վարձակալության ժամկետը ավարտվելուց կամ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելուց հետո իր հայեցողությամբ տնօրինելու իր պահանջով վարձակալի կողմից թողնված հողի բարելավումները և անշարժ գույքը (բաժանելի և անբաժանելի):

7. Վարձատուն պարտավոր է.

7.1. չմիջամտել վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն վնաս չի պատճառում շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրինական շահերը,

7.2. նախօրոք տեղեկացնել վարձակալին հողամասի այլ անձանց տնօրինությանը կամ սեփականությանը փոխանցելու վերաբերյալ,

7.3. սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման օրվանից 30-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

760464457 0250 0209

Վարձատուի պետական կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում իրավունքների պետական գրանցման համար և իր ֆինանսական միջոցների հաշվին կատարել սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր ծախսերը՝ այդ թվում վճարել պետական տուրքը:

## III. Վարձավճարը

8. Հողամասի տարեկան վարձավճարը կազմում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի ________ տոկոսը, որը կազմում է 67.6×25×5=8450000 Հայաստանի Հանրապետության դրամ: Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը կազմում է 40.950 Հայաստանի Հանրապետության դրամ:

9. Հողի կադաստրային արժեքի փոփոխման դեպքում վարձատուն պարտավոր է նոր կադաստրային արժեքի մասին ծանուցում գրավոր տեղյակ պահել վարձակալին: Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում նոր կադաստրային արժեքի հիման վրա հաշվարկված վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց տասնհինգ օր անց: Վարձավճարը չի փոփոխվում, եթե վարձակալը մինչև համապատասխան տասնհինգօրյա ժամկետի ավարտը սույն պայմանագրի 19.2-րդ կետով նախատեսված կարգով ծանուցել է վարձատուին պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին:

10. Բացառությամբ սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված դեպքերի, վարձավճարի չափը կարող է փոփոխվել միայն սույն պայմանագրի կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Վարձավճարի փոփոխման վերաբերյալ փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում կողմերը կարող են դադարեցնել պայմանագիրը սույն պայմանագրի 18.2-րդ կամ 19.2-րդ կետերով նախատեսված կարգով:

11. Վարձակալական ընթացիկ վճարումները վարձակալի կողմից մուծվում են հավասար չափերով՝ ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Առաջին վարձակալական վճարումները կատարվում է դրամով կանխավճար, ոչ ուշ, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում: Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

12. Սույն պայմանագրով վարձակալական վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ________________ հաշվի համար:

760464457 0240 0209.

Վարձատուն նշված հաշվի համարի կամ վճարումների կատարման կարգի փոփոխման մասին նախապես տեղյակ է պահում վարձակալին:

13. Ոչ լրիվ վճարային ժամանակահատվածների համար վարձավճարը հաշվարկվում է ելնելով տվյալ օրացուցային եռամսյակի օրերի փաստացի թվին համապատասխանող օրական վարձավճարի վերահաշվարկից:

## IV. Տույժեր և տուգանքներ

14. Վարձակալը վարձավճարների անժամանակ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ վարձատուին չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

## V. Պայմանագրի ժամկետները

15. Սույն պայմանագիրը կնքվում է 25 տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում իրավունքների պետական գրանցման պահից:

16. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնության դեպքում:

17. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցնելը պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտավորությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:

## VI. Պայմանագրի դադարումը

18. Սույն պայմանագիրը դադարում է.

18.1. պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում,

18.2. կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

18.3. պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում:

19. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձակալի կողմից՝

19.1. եթե հողը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի.

26046457-0230-0209

19.2. նախատեսված այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:

20. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձատուի կողմից, եթե՝

20.1. Վարձակալը երեք ամիս ու չվճարում է վարձավճարի գումարը.

20.2. Վարձակալի հողամասն օգտագործվում է ոչ նպատակային, խախտվում են օգտագործման պայմանները.

20.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի խախտումների դեպքում:

## VII. Անհաղթահարելի ուժ

21. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մարդուղին խոչընդոտողների վթար կամ նման այլ իրադարձություններ:

22. Կողմերն իրենց պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարման համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխատեսել և որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:

23. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում, կողմերը պետք է քննարկեն սույն պայմանագրի շարունակման մասին հարցը:

## VIII. Եզրափակիչ դրույթներ

24. Սույն պայմանագիրը կազմվում է 7 համարժեք օրինակից, որոնցից մեկական օրինակը պահվում է կողմերի մոտ, ինչպես նաև անշարժ գույքի գրանցումը վարող պետական մարմնում:

25. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:

26. Վարձակալի կողմից վարձակալված հողամասի վրա ամրակայված գույքը հօգուտ երրորդ անձի օտարելու դեպքում վերջինիս են անցնում նաև հողի նկատմամբ վարձակալին նախկինում ամրակայված գույքի օտարումը պատկանող իրավունքները և պարտականությունները:

26046457-0230-0209

27. Հողի սեփականատիրոջ կողմից հողը երրորդ անձի օտարելիս, վարձակալը պահպանում է վարձակալված հողի նկատմամբ մինչև հողի օտարումն իր ունեցած իրավունքները և պարտականությունները:

28. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի վավերապայմանները.

Վարձատու ____________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

ՀՎ 900265144080

Վարձատու ____________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ. ____________________
(ստորագրություն)

Վարձակալ ____________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

ՀՎ ____________________

Վարձակալ ____________________
(անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ. ____________________
(ստորագրություն)

AA 0694095 055

3604 6457 0210 8209

«10» 10 2002 թվականին սույն պայմանագիրը վավերացված է

իմ պետական նոտարական գրասենյակի [illegible] ~~պետական~~ նոտար ___________
անվանումը

Ա. Մ. [illegible] կողմից:
ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև (իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ ___________________________ իրավունքները ստուգված են:
անունը (անվանումը)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ___________ հոդվածին համապատասխան, սույն պայմանագիրը գրանցման է ենթակա ըստ գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պետական կադաստրի տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 1-5680 ում

Գանձված է պետական տուրք 6000

Պետական նոտար ___________
ստորագրությունը

Զինանշանի պատկերով կնիք

36046457 0080-2105

ՏԱՐԱԾՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կատարող

« » 200 թ.

Հաստատում եմ
Ալավերդու քաղաքապետ

« » 200 թ.



*Նախագիծ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ
**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, N 088580 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Լևոն Գրիգորի Միքայելյանի դիմումը, սեփականության իրավունքի N 088580 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ փողոց 22 հասցեում գտնվող, N 088580 վկայականով գրանցված ավտոտնակի զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00279 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, 52388 /հիսուներկու հազար երեք հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել ավտոտնակի սեփականատերեր հանդիսացող՝ Լևոն Գրիգորի Միքայելյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Լևոն Գրիգորի Միքայելյանի հետ կնքելու հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ

Մ 1:1000




Լևոն Գրիգորի Միրայելյանին պատկանող՝ Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ 22 հասցեում գտնվող, ավտոտնակի զբաղեցրած՝ 0.00279 հա մակերեսով հողամասի տեղադիրքը /կադաստրային քարտեզի 06-002-0038-0005 ծածկագրից/

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 30/1 ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-088-0982-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204.1-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ, 57-րդ, 60-րդ 76-80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի $14^{1}$ կետով և 46.2 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 02122024-06-0020 վկայականը (գաղտնաբառ՝ GZIIDSTEGIDY), համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 1-ին փողոց, 30/1 հասցեում գտնվող, 06-088-0982-0003կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0.00264 հեկտար մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, մրցութային կարգով, տրամադրել 10 (տասը) տարի ժամկետով:
2. Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ **20000 (քսան հազար) դրամ:**
3. Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
   1) Հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
   2) Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:
4. Համայնքի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 30/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-088-0982-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00264 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ




ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**17 դեկտեմբերի 2024 թվական, N -Ա**

### ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Ալավերդի համայնքի Մեծ Այրումի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Վարդենի Գալստյանի և «Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Արմինե Զավարյանի զեկուցագրերը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. «Ալավերդի համայնքի Մեծ Այրումի մանկապարտեզ» և «Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների և գույքացանկից և հաշվեկշռից դուրս գրել մաշված, օգտագործման համար ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ**

---

10.12.2024թ.

ՀՀ Լոռու մարզ, գ.Մեծ Այրում, Փ 3 Շ 1

Հեռ. 094955203, ayrum.nuh.19@inbox.ru

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի

ղեկավար Դ.Ղումաշյանին

Մեծ Այրումի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի

տնօրեն Վ. Գալստյանից

## Զեկուցագիր

Հարգելի՛ պարոն Դ.Ղումաշյան.

Հայտնումեմ եմ Ձեզ, որ <<Ալավերդի համայնքի Մեծ Այրումի մանկապարտեզ>> ՀՈԱԿ –ը հիմնանորոգվելուց հետո մինչև 2024թ.-ի ավարտը համալրվում է ՀՀ կառավարության կողմից տրամադրված բոլոր անհրաժեշտ նոր գույքով և տեխնիկայով:

Հաշվի առնելով վերոգրյալը,եղած հին գույքի և տեխնիկայի անհրաժեշտությունը այլևս չկա,ուստի խնդրում եմ եղած հին գույքն ու տեխնիկան հաստատության հաշվեկշռից դուրս գրել ըստ ստորև ներկայացված ցանկի:

Տնօրեն [signature] Վ.Գալստյան

## Մեծ Այրումի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի դուրս գրման ենթակա գույքի ցուցակ

| հ/հ | ապրանքանյութական արժեքների անվանումը | Ստուգման պահին փաստացի առկա է | | | | Հաշվապահական հաշվառման տվյալների համաձայն | | Գույքագրման արդյունքները | | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գույքագրման համարը | քանակ | գինը | գումար | | | Պակասորդ | | Ավելցուկ | | |
| | | | | | | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | |
| 1 | Մահճակալ | 1 | 5 | 3601 | 18005 | 5 | 18005 | | | | | |
| 2 | Մահճակալ | 2 | 17 | 1281 | 21777 | 17 | 21777 | | | | | |
| 3 | պահարան 4-տեղ | 3 | 3 | 1900 | 5700 | 3 | 5700 | | | | | |
| 4 | պահարան 5-տեղ | 4 | 3 | 2308 | 6924 | 3 | 6924 | | | | | |
| 5 | սեղան 4-տեղ | 5 | 8 | 1212 | 9696 | 8 | 9696 | | | | | |
| 6 | սեղան 2-տեղ | 6 | 3 | 1974 | 5922 | 3 | 5922 | | | | | |
| 7 | պահարան | 7 | 1 | 1870 | 1870 | 1 | 1870 | | | | | |
| 8 | խոհան.պահարան | 8 | 1 | 1697 | 1697 | 1 | 1697 | | | | | |
| 9 | պահարան | 9 | 1 | 2666 | 2666 | 1 | 2666 | | | | | |
| 10 | պահարան | 10 | 1 | 2025 | 2025 | 1 | 2025 | | | | | |
| 11 | գրտախտակ | 11 | 1 | 588 | 588 | 1 | 588 | | | | | |
| 12 | մեծ վաննա | 12 | 2 | 1904 | 3808 | 2 | 3808 | | | | | |
| 13 | ծածկոց (բարեգ.) | 16 | 27 | 0 | 0 | 27 | 0 | | | | | |
| 14 | սառնար.անսարք | 17 | 1 | 12292 | 12292 | 1 | 12292 | | | | | |
| 15 | էլ.սալիկ անսարք | 18 | 3 | 7790 | 23370 | 3 | 23370 | | | | | |
| 16 | ջազվա | 24 | 1 | 720 | 720 | 1 | 720 | | | | | |
| 17 | գդալ | 25 | 30 | 100 | 3000 | 30 | 3000 | | | | | |
| 18 | պատառաքաղ | 26 | 26 | 100 | 2600 | 26 | 2600 | | | | | |
| 19 | տախտակ | 29 | 1 | 300 | 300 | 1 | 300 | | | | | |
| 20 | բաժակ | 32 | 7 | 150 | 1050 | 7 | 1050 | | | | | |
| 21 | ափսե | 33 | 12 | 250 | 3000 | 12 | 3000 | | | | | |
| 22 | ափսե ապուրի | 34 | 14 | 280 | 3920 | 14 | 3920 | | | | | |
| 23 | սեղան | 36 | 1 | 1212 | 1212 | 1 | 1212 | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | չորանոց | 37 | 1 | 3600 | 3600 | 1 | 3600 | | | | | |
| 25 | աթոռ մանկ. | 38 | 0 | 0 | 0 | 0 | 0 | | | | | |
| 26 | աթոռ մանկ.(բարեգ.) | 40 | 20 | 0 | 0 | 20 | 0 | | | | | |
| 27 | աթոռ մանկ.(բարեգ.) | 41 | 20 | 0 | 0 | 20 | 0 | | | | | |
| 28 | ման. խաղահր.(բարեգ.) | 46 | 1 | 40000 | 40000 | 1 | 40000 | | | | | |
| 29 | խաղասարքեր(բարեգ.) | 47 | 5 | 0 | 0 | 5 | 0 | | | | | |
| 30 | ջրի ապարատ | 48 | 1 | 84000 | 84000 | 1 | 84000 | | | | | |
| 31 | բաժակ պլաստմ. | 50 | 6 | 250 | 1500 | 6 | 1500 | | | | | |
| 32 | բաժակ պլաստմ. | 51 | 10 | 350 | 3500 | 10 | 3500 | | | | | |
| 33 | հեռուստ.(բարեգ.) | 52 | 1 | 180000 | 180000 | 1 | 180000 | | | | | |
| 34 | DVD նվագարկիչ | 53 | 1 | 170000 | 170000 | 1 | 170000 | | | | | |
| 35 | գորգ | 54 | 1 | 49000 | 49000 | 1 | 49000 | | | | | |
| 36 | գդալ | 55 | 12 | 184 | 2208 | 12 | 2208 | | | | | |
| 37 | դույլ | 56 | 1 | 2500 | 2500 | 1 | 2500 | | | | | |
| 38 | բաժակ | 57 | 5 | 200 | 1000 | 5 | 1000 | | | | | |
| 39 | կշեռք(անսարք) | 58 | 1 | 15000 | 15000 | 1 | 15000 | | | | | |
| 40 | դույլ | 59 | 1 | 1500 | 1500 | 1 | 1500 | | | | | |
| 41 | ափսե | 60 | 12 | 400 | 4800 | 12 | 4800 | | | | | |
| 42 | թեյնիկ | 61 | 1 | 3000 | 3000 | 1 | 3000 | | | | | |
| 43 | սպիտ. կոմպլ.(բարեգ) | 62 | 25 | 0 | 0 | 25 | 0 | | | | | |
| 44 | Սավան(բարեգ) | 63 | 25 | 0 | 0 | 25 | 0 | | | | | |
| 45 | պոլի փալտ | 66 | 1 | 850 | 850 | 1 | 850 | | | | | |
| 46 | կապրոնե տարա 10լ | 68 | 1 | 2000 | 2000 | 1 | 2000 | | | | | |
| 47 | կապրոնե տարա 7,5 | 69 | 2 | 1800 | 3600 | 2 | 3600 | | | | | |
| 48 | կապրոնե տարա 3,7 | 70 | 1 | 1000 | 1000 | 1 | 1000 | | | | | |
| 49 | պլաստմ.տարա | 71 | 1 | 1000 | 1000 | 1 | 1000 | | | | | |
| 50 | պլաստմ.տարա | 72 | 1 | 800 | 800 | 1 | 800 | | | | | |
| 51 | պլաստմ.տարա | 73 | 1 | 2000 | 2000 | 1 | 2000 | | | | | |
| 52 | շքամուտքի գորգ | 74 | 1 | 2000 | 2000 | 1 | 2000 | | | | | |
| 53 | պլաստմ.թասիկ | 75 | 1 | 600 | 600 | 1 | 600 | | | | | |
| 54 | պլաստմ.թասիկ | 76 | 1 | 700 | 700 | 1 | 700 | | | | | |
| 55 | երկարացմ.լար | 77 | 1 | 3000 | 3000 | 1 | 3000 | | | | | |
| 56 | բաժանարար | 78 | 1 | 800 | 800 | 1 | 800 | | | | | |
| 57 | քերիչ | 79 | 1 | 2000 | 2000 | 1 | 2000 | | | | | |
| 58 | կապրոնե թասիկ | 80 | 1 | 700 | 700 | 1 | 700 | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 59 | լար համակարգչի | 82 | 1 | 1000 | 1000 | 1 | 1000 | | | | | |
| 60 | Էլեկտրական սալիկ | 83 | 1 | 18000 | 18000 | 1 | 18000 | | | | | |
| 61 | փական կախովի | 87 | 1 | 1200 | 1200 | 1 | 1200 | | | | | |
| 62 | փական խողովակի | 88 | 1 | 2150 | 2150 | 1 | 2150 | | | | | |
| 63 | սիլիկոնե խողովակ | 89 | 7 | 360 | 2520 | 7 | 2520 | | | | | |
| 64 | լար կապիչ | 90 | 3 | 700 | 2100 | 3 | 2100 | | | | | |
| 65 | Էլ. սալիկ (փչովի) | 92 | 1 | 12000 | 12000 | 1 | 12000 | | | | | |
| 66 | շքամուտքի գորգ | 93 | 1 | 2500 | 2500 | 1 | 2500 | | | | | |
| 67 | Ծորակ տաքացուցիչ | 94 | 1 | 14000 | 14000 | 1 | 14000 | | | | | |
| 68 | Ծորակ տաքացուցիչ | 96 | 1 | 17000 | 17000 | 1 | 17000 | | | | | |
| 69 | ավել գոգաթիակով | 97 | 1 | 2000 | 2000 | 1 | 2000 | | | | | |
| 70 | հատակ մաքրող ձող | 98 | 1 | 2300 | 2300 | 1 | 2300 | | | | | |
| 71 | հատակ լվ. Ձող դույլով | 99 | 1 | 5800 | 5800 | 1 | 5800 | | | | | |
| 72 | հատակ լվ. Ձող դույլով | 100 | 2 | 6400 | 12800 | 2 | 12800 | | | | | |
| 73 | խաղասարքեր | 104 | 1 | 0 | 0 | 1 | 0 | | | | | |
| 74 | սանհանգույցի ակսեսուարներ | 113 | 1 | 18250 | 18250 | 1 | 18250 | | | | | |
| 75 | շերեփ | 27 | 1 | 1550 | 1550 | 1 | 1550 | | | | | |
| 76 | խառնիչ | 28 | 1 | 1450 | 1450 | 1 | 1450 | | | | | |
| 77 | գրքերի պահարան | 39 | 0 | 0 | 0 | 0 | 0 | | | | | |
| 78 | բռնակով աման | 67 | 2 | 400 | 800 | 2 | 800 | | | | | |
| 79 | ջերամաչափ Էլ. | 102 | 1 | 0 | 0 | 1 | 0 | | | | | |
| 80 | տախտակ պլաստ. (բար | 129 | 6 | 0 | 0 | 6 | 0 | | | | | |
| 81 | գազի բալոն 5կգ | 22 | 1 | 9300 | 9300 | 1 | 9300 | | | | | |
| 82 | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | 841520 | | 841520 | | | | | |
| | | | | | | | | | | | | |

«Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

/օգտագործման համար ոչ պիտանի/ գույքի օտարման

Ցանկ

| Անվանում | Քանակ | Գումար /սկզբնակ./ | |
|---|---|---|---|
| Մահճակալ | 8 | | |
| Կշեռք բժշկական | 1 | 308 | |
| Կահույք/ տնօրենի աշխատ/ | 1 | | |
| Գրապահարան/մեթ. | 2 | 49169 | |
| Գրասեղան | 5 | 560 | |
| Մանկական պահ. | 10 | 2030 | |
| Մանկական թախտ | 2 | 616 | |
| Գորգ էրեբունի | 2 | | |
| Ուղեգորգ | 2 | 40326 | |
| Գորգ | 2 | 28122 | |
| Գրապահարան | 1 | | |
| Սառնարան էլջի | 1 | | |
| Հեռուստացույց Պրիմա | 1 | | |
| Դիվիդի Պրիմա | 1 | | |
| Երաժշտական կենտրոն/Սամսունգ/ | 1 | | |
| Մսաղաց | 1 | | |
| Ջեռուցման կաթսա | 1 | | |
| Գրատախտակ | 4 | | |
| | | | |
| | | | |

Տնօրենի պաշտ`. Ա. Ջավարյան